ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Մարդկության պատմությունը հարուստ է շատ նշանակալից դեպքերով ու իրադարձություններով։ Սակայն դրանցից և ոչ մեկը հասարակության զարգացման ընթացքի վրա այնպիսի խորը ազդեցություն չի ունեցել, որքան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որի 60-ամյակը նշվում է այս տարի։ Հոկտեմբերի հաղթանակը XX դ. գլխավոր իրադարձությունն է։

Ո՞րն է անցած 60-ամյակի գլխավոր նվաճումը։ Սովետական ժողովուրդը, իր անձնվեր աշխատանքով, հաղթահարելով անասելի դժվարություններ, կառուցեց զարգացած սոցիալիստական հասարակարգ։ Անցած տարիներին անճանաչելիորեն փոխվել է մեր երկրի ժողովրդական տնտեսությունը։ Չնայած սովետական պետության գոյության 60 տարիներից մոտավորապես երկու տասնամյակն ընկել է պատերազմներին և տնտեսության վերականգնմանը, 1976 թ. Սովետական Միության ազգային եկամուտը նախահեղափոխական մակարդակի համեմատությամբ ավելացավ 65 անգամ։ Բավական է նշել, որ այժմ 2,5 օրում մեր արդյունաբերությունն արտադրում է նույնքան արտադրանք, որքան արտադրվում էր Ռուսաստանում ամբողջ 1913 թ.։ Կամ մի ուրիշ փաստ։ Հայտնի է, որ մինչև սովետական իշխանության հաղթանակը մեր երկրին ընկնում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 4%-ից մի փոքր ավելին, իսկ այսօր՝ նրա մեկ հինգերորդ մասը։ Խոր վերափոխումներ կատարվեցին նաև գյուղում։ Գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը անցած 60 տարում աճել է 4,4 անգամ։

Սոցիալիզմը անսահման հնարավորություններ է ստեղծել հոգևոր կուլտուրայի ու գիտության զարգացման համար։ Նախահեղափոխական Ռուսաստանում չափահաս բնակչության մոտ $^3/_4$-ը անգրագետ էր։ Իսկ մեր օրերում ժողովրդական տնտեսության մեջ աշխատողների ավելի քան $^3/_4$-ը բարձրագույն կամ միջնակարգ կրթություն ունի։ Սովետական Միությունում այժմ սովորում է ավելի քան 93 միլիոն մարդ, կա 1,3 միլիոն գիտական աշխատող։ Այլ խոսքով, այժմ 108 անգամ շատ գիտական աշխատողներ կան, քան ցարական Ռուսաստանում 1913 թ.։

Սոցիալիզմի ակնառու նվաճումներից մեկը ազգային հարցի արդարացի լուծումն է։ «Սովետական իշխանության տարիներին հավասարվեց սովետական բոլոր հանրապետությունների տնտեսական զարգացման մակարդակը... Ամուր և միաձույլ են Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների

մեծ ու հզոր Միությունը կազմող բոլոր ազգերի ու ազգությունների եղբայրական բարեկամությունն ու միասնությունը... Ապահովվել է բոլոր ազգերի ու ազգությունների փաստական հավասարությունը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, ծաղկել է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, հաստատվել է աշխատավոր մարդկանց իսկական եղբայրություն՝ անկախ նրանց ազգությունից, եղբայրություն, որը զոդված է արմատական շահերի, նպատակների և մարքս-լենինյան գաղափարախոսության ընդհանրությամբ»[1]։

Պատմական այս բոլոր հաղթանակներն անխզելիորեն կապված են կոմունիստական կուսակցության բազմաբեղուն գործունեության հետ։ Կուսակցության ղեկավարությամբ է ձեռք բերվել մեծ Հոկտեմբերի հաղթանակը, կուսակցության ղեկավարությամբ է սովետական ժողովուրդը նվաճել սոցիալիզմի բարձունքները, նրա ղեկավարությամբ այժմ կառուցվում է կոմունիստական հասարակարգը։

ՍՄԿԿ մեր հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժն է։

Վերջին վեց տասնամյակում հսկայական փոփոխություններ են կատարվել ոչ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում։ Այդ հիրավի համապարփակ սոցիալական փոփոխությունների սկիզբը դրեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Այն մինչև հիմքերը ցնցեց կապիտալիզմի աշխարհը, որը պառակտվեց երկու սիստեմի՝ սոցիալիստական և կապիտալիստական։ Մարդկությունը հուսալի պատվար ձեռք բերեց զավթողական պատերազմների դեմ պայքարում՝ հանուն խաղաղության և ժողովուրդների անվտանգության, հանուն սոցիալական առաջադիմության։ Մեծ հոկտեմբերը բացեց նոր դարաշրջանը՝ կապիտալիզմից սոցիալիզմին մարդկության անցման շրջանը։ Հոկտեմբերյան հեղափոխության մասին մեծ ջերմությամբ է արտահայտվել Ռոմեն Ռոլանը։ «Դուք,— գրում է նա,— բերում եք նոր օրվա բոցը, այն իդեալի բոցը, որը հաստատուն ամրացել է իրականության մեջ, բերում եք այն կենսագործելու ընդունակ պատանի ուժերի ամբողջ հեղեղ։ Մենք մեր Արևմուտքի մթնշաղի միջից տեսնում ենք, թե ինչպես է Արևելքում ծագում հզոր բռնկման նոր արշալույս, նոր դարաշրջանի լայն հորիզոնը։ Ողջույն բարձրացող արեգակին»[2]։

Ամեն մի անցնող տարի նոր ուժով է հաստատում լենինյան մտքի ճշմարտացիությունը. որքան ավելի ենք հեռանում 1917 թ. այն օրվանից, որը շրջադարձ նշանավորեց մարդկության պատմության մեջ, այնքան ավելի վառ կերպով է դրսևորվում նրա միջազգային անանց նշանակությունը։

Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը խորությամբ բացահայտել է Վ. Ի. Լենինը։ Իր «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում նա ընդգծել է, որ ռուսական օրինակը բոլոր երկրներին ցույց է տալիս ինչ-որ բան, այն էլ չափազանց էական բան նրանց անխուսափելի և մոտալուտ ապագայից։ Խոսելով Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակության մասին, նա նշել է, որ այդ նշանակությունը պետք է հասկանալ և՛ լայն, և՛ նեղ իմաստով։

---

1 ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» («Սովետական Հայաստան», 1.II.1977)։

2 «ՍՍՀՄ պատմություն», Երևան, 1974, էջ 275։

Որն է Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունը լայն իմաստով։ Անդրադառնալով այդ հարցին, Վ. Ի. Լենինը մատնանշում է. «Մեր հեղափոխության ոչ թե մի քանի, այլ բոլոր հիմնական և շատ երկրորդական գծերը միջազգային նշանակություն ունեն՝ բոլոր երկրների վրա նրա ունեցած ազդեցության իմաստով»[3]։ Հիրավի, մեծ Հոկտեմբերի ազդեցությամբ աշխարհի տարբեր մասերում ծավալվեց հեղափոխական շարժումը։ Ինչպես ընդգծված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, այն հեղափոխական հզոր ազդակներ տվեց միջազգային բանվորական շարժման բոլոր ջոկատներին, նոր հնարավորություններ ու հեռանկարներ բացեց գաղութային ու կիսագաղութային երկրներում ազգային-ազատագրական պայքարի զարգացման համար։ Մտովի վերհիշենք անցած փաստերն ու դեպքերը։ Հազիվ էր բոլորել հոկտեմբերյան հաղթանակի առաջին տարին, երբ հեղափոխություն տեղի ունեցավ Գերմանիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում։ Հիշենք 1919 թ., երբ սովետական իշխանություն հաստատվեց Հունգարիայում և Բավարիայում։ Միլիոնավոր բանվորներ գործադուլի դուրս եկան ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում և Իտալիայում։ Հենց այդ ժամանակ էլ սկիզբ առավ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը գաղութային սիստեմի դեմ՝ Աֆղանստանում և Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում։

Այն փաստը, որ այժմ մարդկության մեկ երրորդը կառուցում է սոցիալիզմ, վկայում է Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակության մասին լայն իմաստով։ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակն իր արտահայտությունը գտավ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման մեջ։ Դա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երկրորդ խոշոր իրադարձությունն է։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծմամբ մեծ Հոկտեմբերի սկզբնավորած հեղափոխական պրոցեսը հասավ որակապես նոր բնագծի։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը գոյություն ունի ընդամենը 30 տարի, սակայն մեծ է նրա ազդեցությունը համաշխարհային իրադարձությունների վրա։ «Սոցիալիզմն արդեն այսօր,— ՍՄԿԿ XXV համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— հսկայական ներգործություն է ունենում աշխարհի հարյուր միլիոնավոր մարդկանց մտքերի ու զգացմունքների վրա։ Նա աշխատավոր մարդկանց համար ապահովում է ազատություն, իսկական դեմոկրատական իրավունքներ, բարեկեցություն, գիտելիքներին տիրապետելու ամենալայն հնարավորություն, ապագայի հաստատ վստահություն։ Նա բերում է խաղաղություն, բոլոր երկրների սուվերենության հարգում և միջպետական իրավահավասար համագործակցություն, հենարան է ծառայում իրենց ազատության և անկախության համար պայքարող ժողովուրդներին։ Իսկ վաղվա օրը, անտարակույս, կբերի սոցիալիզմի անսահման հնարավորությունների, կապիտալիզմի հանդեպ նրա պատմական գերազանցության նոր վկայություններ»[4]։

Վերջին տարիներին զգալիորեն ամրապնդվել են սոցիալիզմի դիրքերը, սոցիալիստական երկրներին հաջողվել է լուծել մի շարք կարևորագույն հարցեր։ Սկսենք Ասիայից։ Պատմական հաղթանակ տարավ Վիետնամի ժողովուրդը։ Վիետնամական հողում ոչ միայն դադարեց արյունահեղությունը, այլև

3 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1964, էջ 391։

4 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում կարդացված ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 15։

ավարտվեց նրա միավորումը։ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունը բնակչության թվով երրորդ սոցիալիստական պետությունն է, որը դարձել է Ասիայի խաղաղության և առաջադիմության կարևոր գործոնը։

Վիետնամից անմիջապես հետո ազատություն նվաճեցին Լաոսը և Կամպուչին։ Լաոսում իշխանության գլուխ անցավ մարքսիստական-լենինյան՝ Լաոսի ժողովրդա-հեղափոխական կուսակցությունը։ Հանձին Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության, ընդլայնվեց սոցիալիզմի երկրների ընտանիքը։

Ակնառու հաջողություններ են ձեռք բերվել Եվրոպայում։ Համընդհանուր ճանաչում է ստացել ԳԴՀ-ն, որն ընդունվել է ՄԱԿ-ի անդամ։ Ուրախալի է, որ ավելի քան 120 պետություններ արդեն դիվանագիտական հարաբերություններ են հաստատել գերմանական բանվորների ու գյուղացիների առաջին պետության հետ։ Շատ կարևոր է այն հանգամանքը, որ միջազգային մասշտաբով հաստատվել է ԳԴՀ-ի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի արևմտյան սահմանների անխախտությունը։ Արևմտյան կիսագնդում անշեղորեն իր քաղաքական և տնտեսական դիրքն է ամրապնդում սոցիալիստական Կուբան։

ՍՄԿԿ XXV համագումարը, ընդհանրացնելով սոցիալիստական երկրների զարգացման փորձը, մատնանշեց, որ յուրաքանչյուր սոցիալիստական ազգի ծաղկման, սոցիալիստական պետությունների տնվերենության ամրապնդման հետ մեկտեղ ավելի ու ավելի են սերտ դառնում նրանց փոխադարձ կապերը, ընդհանրության շատ տարրեր են երևան գալիս նրանց քաղաքականության մեջ, էկոնոմիկայում, սոցիալական կյանքում, տեղի է ունենում զարգացման մակարդակների աստիճանական հավասարում. «Սոցիալիզմի երկրների աստիճանական մերձեցման այդ պրոցեսը այժմ միանգամայն որոշակիորեն դրսևորվում է որպես օրինաչափություն»[5]։

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ սոցիալիզմը համաշխարհային զարգացման ընթացքի վրա ազդում է առաջին հերթին տնտեսական հաջողություններով։ Այս բնագավառում նվաճումները նույնպես պատկառելի են։ Հաջողությամբ իրագործվում է սոցիալիստական ինտեգրացման կոմպլեքսային ծրագիրը, որն ընդունվել է 1971 թ.։ Սոցիալիստական համագործակցությունն այժմ դարձել է աշխարհում ամենադինամիկ տնտեսական ուժը։ Վերջին հինգ տարում նրա մեջ մտնող երկրների ինդուստրիան չորս անգամ ավելի արագ է աճել, քան զարգացած կապիտալիստական պետություններինը։ 1975 թ. նրանք ավելի քան 2 անգամ շատ արդյունաբերական արտադրանք թողարկեցին, քան «ընդհանուր շուկայի» երկրները։ Ըստ որում, նախկինում տնտեսապես ետ մնացող երկրները զարգանում են ավելի արագ տեմպերով, որը հնարավորություն է տալիս էականորեն մերձեցնել և ապա հավասարեցնել տնտեսական զարգացման մակարդակները։ Այսպես, 1951—1975 թթ. Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ մտնող երկրների արդյունաբերությունն աճել է 10 անգամ, իսկ Բուլղարիայում՝ 18, Ռումինիայում՝ 21 անգամ։ Այդ գիծը կշարունակվի նաև առաջիկայում։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հաջողությունների մասին հանգամանորեն խոսվեց ՏՓԽ-ի նստաշրջանի հերթական 31-րդ նիստում, որը

---

5 Նույն տեղում, էջ 8։

տեղի ունեցավ 1977 թ. հունիսին, Վարշավայում։ Նիստը նվիրված էր մեծ Հոկտեմբերի 60-ամյակին։ Սոցիալիստական երկրների ներկայացուցիչներն իրենց ելույթներում միահամուռ կերպով նշեցին, որ նոր կյանքի կառուցումը լուսավորում է մեծ Հոկտեմբերի ջահը, որը վեց տասնամյակ առաջ վառեց մեծ Լենինի կուսակցությունը։ Համաշխարհային սոցիալիզմի հզորությունը և օրինակը, ինչպես ընդգծված է Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, բազմապատկեցին միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական հնարավորությունները, նպաստեցին ազատագրական շարժման առաջընթացին։

Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակության կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ այն խթանեց գաղութային ժողովուրդների պայքարը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնեց իմպերիալիզմի գաղութային սիստեմի ճգնաժամը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական շարժման ճնշման տակ փլուզվեց այդ սիստեմը։ Աշխարհի քաղաքական քարտեզի վրա առաջացան տասնյակ նոր անկախ պետություններ։ Միայն Աֆրիկայում այժմ հաշվվում է 49 պետություն, որոնք կանգնել են անկախության ճանապարհին։ Հեղափոխական շարժման խոշոր նվաճում եղավ Անգոլայի հայրենասերների հաղթանակը։ Կազմվել է սոցիալիստական կողմնորոշում ունեցող պետությունների մի ընդարձակ գոտի, պետություններ, որտեղ կատարվել ու կատարվում են սոցիալ-տնտեսական խորը վերափոխումներ։

Սովետական Միությունը, սոցիալիստական մյուս երկրները համակողմանի աջակցություն են ցույց տալիս զարգացող երկրներին։ Սովետական Միությունը օգնել է Գանայի և Մարոկկոյի, Թունիսի և Սոմալիի, Կոնգոյի և Ալժիրի, Անգոլայի և Մոզամբիկի ժողովուրդներին՝ ազատագրական պայքարում։ Սովետական Միության աջակցությամբ Աֆրիկայի շատ երկրներում ստեղծվում է ազգային արդյունաբերություն, գյուղատնտեսությունը փոխադրվում է ժամանակակից հիմքի վրա, կարգավորվում է կրթության գործը, պատրաստվում են տեխնիկական կադրեր։ Սովետական կոմունիստների XXV համագումարը վերստին հայտարարեց, որ Սովետական Միությունը այսուհետև ևս կաջակցի իրենց ազատության համար մարտնչող բոլոր ժողովուրդներին։ «Ընդ որում, Սովետական Միությունը չի փնտրում որևէ օգուտ իր համար, չի ընկնում կոնցեսիաների ետևից, չի ձգտում հասնել քաղաքական տիրապետության, ձեռք բերել ռազմական բազաներ։ Մենք վարվում ենք այնպես, ինչպես մեզ թելադրում են մեր հեղափոխական խիղճը, մեր կոմունիստական համոզմունքները»[6]։

Զարգացող երկրների քաղաքական և հասարակական շատ նշանավոր գործիչներ բազմիցս ընդգծել են սոցիալիստական պետությունների օգնության դերը իրենց երկրների համար անկախություն նվաճելու և այն ամրապնդելու գործում։ Նրանք նշել են, թե մեծ Հոկտեմբերը ինչ նշանակություն է ունեցել այդ ժողովուրդների ազատագրական պայքարի ծավալման համար։ Աֆրիկյան ականավոր հայրենասեր Ամիլկար Կաբրալը նշել է, որ «Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը... միլիոնավոր ճնշվածների ցույց տվեց հեղափոխական պայքարի ուղին, նպաստեց ամբողջ աշխարհում ազ-

---

6 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը..., էջ 19։

գային-ազատագրական շարժման հաջող զարգացմանը»[7]։ Մոզամբիկի պրեզի-դենտ Սամորա Մաշելն ընդգծել է, որ Մոզամբիկի ժողովուրդը Հոկտեմբերի 60-ամյակը նշում է որպես իր սեփական տոնը[8]։

«Պատմությունը,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ որոշման մեջ,— անհերքելիորեն վկայում է արդիականության երեք հիմնական հեղափոխական ուժերի՝ համաշխարհային սոցիալիզմի, միջազգային պրոլետարիատի և ազգային-ազատագրական շարժման դաշինքի անհաղթահարելի հզորությունը»[9]։

Խոսելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության միջազգային նշանակության մասին, պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս։ Հոկտեմբերը հսկայական դեր կատարեց միջազգային կոմունիստական շարժման ձևավորման և զարգացման գործում։ Նրա ազդեցությամբ բոլոր մայրցամաքներում սկսվեց կազմակերպված պրոլետարական ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների ձևավորումը։ Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի շատ երկրներում մեկը մյուսի հետևից կազմակերպվեցին կոմունիստական կուսակցություններ։ Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ Գերմանիայի կոմունիստական կուսակցության ստեղծումը, որի հիմնադիր համագումարն իր աշխատանքը ավարտեց 1919 թ. սկզբին։ Նորաստեղծ կուսակցությունների հիման վրա էլ 1919 թ. մարտին Մոսկվայում հիմնադրվեց Կոմունիստական ինտերնացիոնալը։ Գործերով ավելի քան երկու տասնամյակ, Կոմինտերնը զգալի գործ կատարեց եղբայրական կուսակցությունների ամրապնդման, նրանց համախմբման գործում։ Համաշխարհային կոմունիստական շարժումը դարձել է արդիականության ամենաառաջադիմական և ազդեցիկ քաղաքական ուժը։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ այժմ կոմունիստական ու բանվորական կուսակցություններ են գործում աշխարհի 90 երկրում։ Եղբայրական կուսակցությունների շարքերում հաշվվում է 60 միլիոն մարդ։ Դա, ինչ խոսք, մեծ ուժ է։ Այժմ, իհարկե, գոյություն չունի Կոմունիստական կուսակցությունների համաշխարհային կենտրոն և դրա անհրաժեշտությունն էլ չկա։ Սակայն համաձայնեցված գիծ մշակելու համար կոմունիստները հավաքվում են միջազգային և ռեգիոնալ խորհրդակցություններ։ Հիշենք կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների միջազգային խորհրդակցությունները 1957 և 1960 թթ.։ Կոմունիստական շարժման հետագա համախմբման ճանապարհին, իմպերիալիզմի դեմ խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարի ուժեղացման ճանապարհին խոշոր ուղենիշներ եղան կոմունիստական ու բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը (1969 թ.), Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների կոմունիստական կուսակցությունների խորհրդակցությունը (1975 թ.), Եվրոպայի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կոնֆերանսը (1976 թ.)։ Այդ համաժողովները ցուցադրեցին կոմունիստների համերաշխության կենսական ուժը։

---

7 «Правда», 20.V.1977.

8 Նույն տեղում։

9 ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշումը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» («Սովետական Հայաստան», 1.II.1977)։

Կոմունիստական ու բանվորական կուսակցությունների գործունեության հիմքում ընկած է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմն օբյեկտիվ բնույթ ունի, այն սերտորեն կապված է բանվոր դասակարգի պայքարի հետ և ծագել է իբրև նրա գաղափարախոսությունը։ Գործնականում պրոլետարական ինտերնացիոնալիզմը նշանակում է միջազգային բանվոր դասակարգի, կոմունիստների համերաշխությունը՝ նոր հասարակարգի համար մղվող պայքարում։ «Կապիտալը,— գրել է Վ. Ի. Լենինը,— միջազգային ուժ է։ Նրան հաղթելու համար հարկավոր է բանվորների միջազգային միություն, նրանց միջազգային եղբայրություն»[10]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմը եղել և մնում է որպես միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման ընդհանուր օրինաչափություններից մեկը։ Լինելով պրոլետարիատի գաղափարախոսությունը, այն ունի դասակարգային որոշակի ուղղվածություն։ Անդրադառնալով ինտերնացիոնալիզմի այդ կողմին, Վ. Ի. Լենինը գրել է. «Գործով ինտերնացիոնալիզմը մեկ և միայն մեկ է՝ անձնվեր աշխատանք իր երկրում հեղափոխական շարժումն ու հեղափոխական պայքարը զարգացնելու համար, նույնպիսի պայքարին և նույնպիսի գծին աջակցելու համար (պրոպագանդայով, համակրանքով, նյութապես) և միմիայն այդ պայքարին աջակցելու համար առանց բացառության բոլոր երկրներում»[11]։ «Պրոլետարական ինտերնացիոնալիզմը,— մի այլ առիթով ասել է Վ. Ի. Լենինը,— պահանջում է... նախ՝ մի երկրում պրոլետարական պայքարի շահերը ենթարկել այդ պայքարի ընդհանուր շահերին համաշխարհային մասշտաբով... Երկրորդ՝ բուրժուազիայի դեմ հաղթանակ իրագործող ազգից պահանջվում է հանուն միջազգային կապիտալի տապալման մեծագույն զոհաբերությունների դիմելու ընդունակություն և պատրաստակամություն»[12]։

Յուրաքանչյուր կոմունիստական կուսակցություն, մարքսիստական-լենինյան տեսության հիման վրա, հաշվի առնելով ազգային պայմանները, ինքնուրույն է որոշում իր քաղաքականությունը, պայքարի ու աշխատանքի ձևերն ու մեթոդները։ Սակայն դա եղբայրական կուսակցություններին չի խանգարում համաձայնեցված կերպով հանդես գալու հեղափոխական պայքարի արմատական հարցերում։ Յուրաքանչյուր կոմունիստական կուսակցության ազգային և ինտերնացիոնալ պատասխանատվությունը անբաժան է։ Մարքսիստ-լենինյանները միաժամանակ թե՛ հայրենասերներ են, թե՛ ինտերնացիոնալիստներ։ Ի դեպ, այս միտքը կարմիր թելի պես անցնում է եղբայրական կուսակցությունների միջազգային բոլոր խորհրդակցությունների փաստաթղթերում։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի հարցերին մեծ ուշադրություն նվիրեց ՍՄԿԿ XXV համագումարը, նրա պաշտպանությունը համարելով յուրաքանչյուր կոմունիստի սրբազան պարտականությունը։

ՍՄԿԿ Կենտկոմի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-րդ տարեդարձի մասին» որոշման մեջ բացահայտվում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի էությունը, նրա բնորոշ կողմերն ու առանձնահատկությունները մեր օրերում։ Այդ սկզբունքի պահպանումը, ասված է որոշ-

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 367։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 72։
12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 170։

ման մեջ, յուրաքանչյուր կոմկուսի դիրքերի ամրապնդման, նրա հեղինակության ու ազդեցության աճի կարևորագույն նախադրյալն է, սեփական երկրի բանվոր դասակարգի հանդեպ իր պարտականությունների և ինտերնացիոնալ պարտքի հաջող կատարման երաշխիքը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը կոմունիստների հաջող գործունեության անսասան հիմքն է, նրանց փորձված զենքը։ ՍՄԿԿ-ն, եղբայրական մյուս կուսակցությունների հետ միասին, այսուհետև էլ կպայքարի պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիման վրա համաշխարհային կոմունիստական շարժման միասնության ամրապնդման համար։

Իսկ ո՞րն է Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունը նեղ իմաստով։ «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում Վ. Ի. Լենինը վերլուծելով սովետական իշխանության երկուտուկես տարվա փորձը, նշել է. «... Մեր հեղափոխության մի քանի հիմնական գծեր ունեն ոչ թե տեղական, ոչ թե ազգային առանձնահատուկ, ոչ թե միայն ռուսական, այլ միջազգային նշանակություն»[13]։ Այլ խոսքով, սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի կառուցման մի շարք օրինաչափություններ, որոնք իրագործվել են մեր երկրում, ընդհանուր են, կրկնելի են, անխուսափելի են բոլոր այն երկրների համար, որոնք կառուցում են կամ ապագայում կկառուցեն սոցիալիզմ։ Ուրեմն, Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը դրսևորվում է նաև նրանով, որ այն ցույց տվեց հեղափոխական վերափոխությունների ուղին, բացահայտեց դրանց ձևերն ու մեթոդները, որոնք ձեռք բերեցին ինտերնացիոնալ բնույթ։ Լենինյան կանխագծումներն իրենց հաստատումը գտան համաշխարհային հեղափոխական շարժման ընթացքում։ Վերցնենք սոցիալիստական մյուս երկրները։ Նրանք, հաշվի առնելով իրենց առանձնահատկությունները, պատմական կոնկրետ պայմանները, ստեղծագործորեն օգտագործել են Սովետական Միության փորձը։ Մեծ Հոկտեմբերի 60-ամյակի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ իրավացիորեն ընդգծվում է, որ «Համաշխարհային սոցիալիզմի պատմական փորձը... անհերքելիորեն ապացուցեց սոցիալիստական և նոր հասարակարգի կառուցման այն հիմնական օրենքների համընդհանուր նշանակությունը, որոնք հայտնագործվել են մարքս-լենինյան գիտության կողմից և առաջին անգամ մարմնավորվել Հոկտեմբերի պրակտիկայում»[14]։ Սա շատ կարևոր է, մանավանդ որ ռևիզիոնիստներն ամեն կերպ փորձում են նսեմացնել սոցիալիստական երկրների և ամենից առաջ Սովետական Միության փորձի միջազգային նշանակությունը, ժխտում են սոցիալիզմի ընդհանուր օրինաչափությունները։

Նշենք Հոկտեմբերյան հեղափոխության մի կարևոր կողմ ևս։ Բանն այն է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը, վճռական ներգործություն ունենալով համաշխարհային զարգացման ընթացքի վրա, միաժամանակ առաջադրեց պետությունների միջև հարաբերությունների նոր սկզբունքներ, որոնք և կազմեցին սոցիալիստական պետության արտաքին քաղաքական գործունեության հիմքը։ Սկսած հաշտության մասին դեկրետից, որն ընդունվեց սովետական իշխանության ծննդի հաջորդ օրը, սոցիալիստական պետությունը հետևողականորեն իրագործում է խաղաղասիրական արտաքին քաղա-

---

13 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 3, էջ 381։

14 «Սովետական Հայաստան», 1.II.1977։

քականություն։ Ավելի քան 30 տարի է, ինչ սովետական ժողովուրդը աշխատում է խաղաղության պայմաններում։ Վերջին տարիներս հաջողվեց դրական շրջադարձ կատարել «սառը պատերազմից» դեպի լարվածության թուլացում, դեպի խաղաղ գոյակցության սկզբունքների հաստատում։

Ինչպես հայտնի է, հրապարակվել և համաժողովրդական քննարկման է ենթարկվում ՍՍՀՄ նոր սահմանադրության նախագիծը։ Հաշվի առնելով Սովետական Միության միջազգային դրության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները, համաշխարհային քաղաքականության մեջ նրա ազդեցության հսկայական աճը, մեր զարգացման ներքին ու արտաքին գործոնների փոխադարձ սերտ կապը, սահմանադրության նախագծի մեջ մտցվել է հատուկ գլուխ ՍՍՀՄ արտաքին քաղաքականության մասին։ Այնտեղ հակիրճ ձևով տրված են սովետական պետության և կոմունիստական կուսակցության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները։ «...Մեր նոր սահմանադրությունը,— ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան (1977 թ.) պլենումում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— ամենայն հաջողությամբ ցույց կտա, որ հաղթանակած սոցիալիզմի առաջին պետությունը իր դրոշակի վրա առհավետ գրել է «Խաղաղություն» բառը՝ որպես իր արտաքին քաղաքականության բարձրագույն սկզբունք, որ համապատասխանում է սեփական ժողովրդի և մոլորակի մյուս բոլոր ժողովուրդների շահերին»[15]։ Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո անցած 60 տարում արմատապես փոխվեց մարդկության զարգացման ընթացքը։ Կանցնեն նորանոր տասնամյակներ և մեծ Հոկտեմբերի գաղափարները կնվաճեն նոր բարձունքներ։

МЕЖДУНАРОДНОЕ ЗНАЧЕНИЕ ВЕЛИКОЙ ОКТЯБРЬСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

Великая Октябрьская социалистическая революция нашла отклик на всех континентах. Образование и развитие мирового социалистического содружества, развитие международного рабочего и коммунистического движения, крушение колониальной системы империализма— главные вехи развития человечества после Октября.

Со времени победы Великого Октября не раз подтверждалась правильность вывода Ленина о том, что Октябрьская революция имеет международное значение, что опыт большевиков показывает *«всем* странам кое-что и весьма существенное, из их неизбежного... будущего».

---

15 *Սովետական Հայաստան», 5.VI.1977։*